ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.03.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2020/55

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ Երանի քաղաքապետարան
Մասնակից՝ «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ

Մասնակցությամբ՝
Երևանի քաղաքապետարանի ներկայացուցիչ՝ Ա. Ներսիսյանի

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔ-ԳՀԾՁԲ-20/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, համակարգչային սարքավորումների սպասարկման ծառայություններ ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2528-2020 գրությամբ «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 14.02.2020թ.-ի թիվ 01/61-2827 գրության հիման վրա, 21.02.2020թ.-ին «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 21.02.2020թ.-ին, 24.02.2020թ.-ին կայացված որոշմամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ, նույն օրը հրապարակվել է www.gnumner.am կայքում և տրվել թիվ ՍՑ-ԼՕ-2020/55 համարի ծածկագիրը:

02.03.2020թ.-ին ու 20.03.2020թ.-ին նշանակվել են նիստեր:

Ընթացակարգի քննությունն ավարտվել է 02.03.2020թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 20.03.2020թ.-ին:

2. Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

Երանի քաղաքապետարանը, 14.02.2020թ.-ի թիվ 01/61-2827 գրությամբ դիմելով ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնել է հետևյալը.

«Գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Երևանի քաղաքապետարանի կողմից 25.12.2019 թվականին հայտարարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ- 20/35» ծածկագրով համակարգչային սարքավորումների սպասարկման ծառայությունների գնման ընթացակարգ:

Ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել Ա/Ձ Վարազդատ Սահակյանը: Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի որոշմամբ 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ընտրված մասնակից է ճանաչվել Ա/Ձ Վարազդատ Սահակյանը: Օրենքով սահմանված կարգով անգործության ժամկետի ավարտից հետո, 24.01.2020

թվականին, Մասնակցին ներկայացվել է պայմանագիր կնքելու առաջարկ: Մասնակցի կողմից սահմանված ժամկետում չի ներկայացվել «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/35» ծածկագրով համակարգչային սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման պայմանագիրը, որակավորման և պայմանագրի ապահովումները: Համաձայն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի՝ Մասնակիցը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Վերոգրյալ իրավական հիմքերով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի բ ենթակետով, առաջարկում եմ Մասնակցի նկատմամբ կիրառել Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է հայտարարված «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/35» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, օրենքով սահմանված կարգով հետագա ընթացքը լուծելու համար:

3. <u>«Վարազդատ Սահակյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 25.02.2020թ.-ին գրությամբ դիմել է «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2528-2020 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում՝ չներկայանալով նաև հրավիրված նիստին:

4. <u>ՍՑ-LO-2020/55 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից համակարգչային սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 25.12.2019թ.-ին հայտարարվել է «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել նաև «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 15.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ-ն գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

Նույն արձանագրության համաձայն՝ հայտարարվել է անգործության ժամկետ, որի ավարտից հետո գնման ընթացակարգի հրավերով սահմանված կարգով Մասնակցի հետ կկնքվի պայմանագիր:

16.01.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պատվիրատուն 24.01.2020թ.-ի գրությամբ armeps.am համակարգի միջոցով էլեկտրոնային տարբերակով ծանուցել է Մասնակցին և առաջարկել է կնքել ներկայացված պայմանագրի նախագիծը և սույն ծանուցումը ստանալուն հաջորդող տաս աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի նախագծի կնքված երկուական օրինակները, պայմանագրի ապահովումը, որակավորման ապահովումը ինչպես նաև դրա ներկայացման գրությունը, որը պետք է հաշվառվի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության փաստաթղթաշրջանառության համակարգում:

Միաժամանակ Մասնակիցը տեղեկացվել է, որ նշված ժամկետում վերը նշված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում վերջինս կզրկվի պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Հանձնաժողովի 12.02.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ 24.01.2020թ.-ին «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ-ին ներկայացվել էր «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/35»

ծածկագրով համակարգչային սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ: Մասնակիցը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 10.02.2020թ.-ը/ Պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը, որակավորման ապահովումը և պայմանագրի ապահովումը, ինչը սակայն վերջինիս կողմից չի տրամադրվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ Մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակացության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2528-2020 գրությամբ «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա

ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

Նույն կետի 13-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Վերոնշյալ իրավակարգավորումների համադրված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնային եղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին

ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն ու պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվում են, որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով, քանի որ իր գործողություններով (անգործությամբ) պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվում է պայմանագիր կնքելու իրավունքից:

Սույն գործի փաստերի հիման վրա Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ

Երևանի քաղաքապետարանի կողմից համակարգչային սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 25.12.2019թ.-ին հայտարարված «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/35» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ ներկայացրած «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ-ն, Հանձնաժողովի 15.01.2020թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ գնման ընթացակարգի 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է ընտրված մասնակից:

16.01.2020թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 5-րդ օրացուցային օրը ներառյալ:

Պատվիրատուն 24.01.2020թ.-ի գրությամբ armeps.am համակարգի միջոցով էլեկտրոնային տարբերակով ծանուցել է Մասնակցին և առաջարկել է կնքել ներկայացված պայմանագրի նախագիծը և սույն ծանուցումը ստանալուն հաջորդող տաս աշխատանքային

օրվա ընթացքում ներկայացնել պայմանագրի նախագծի կնքված երկուական օրինակները, պայմանագրի ապահովումը, որակավորման ապահովումը ինչպես նաև դրա ներկայացման գրությունը, որը պետք է հաշվառվի Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի գնումների վարչության փաստաթղթաշրջանառության համակարգում:

Միաժամանակ Մասնակիցը տեղեկացվել է, որ նշված ժամկետում վերը նշված փաստաթղթերը չներկայացնելու դեպքում վերջինս կզրկվի պայմանագիր ստորագրելու իրավունքից:

Հանձնաժողովի 12.02.2020թ.-ի նիստի թիվ 5 արձանագրության համաձայն՝ 24.01.2020թ.-ին «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ-ին ներկայացվել էր «ԵՔ-ԳՀԾՁԲ-20/35» ծածկագրով համակարգչային սարքավորումների սպասարկման ծառայությունների ձեռքբերման պայմանագիր կնքելու առաջարկ: Մասնակիցը պարտավոր էր պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալոլց հետո տաս աշխատանքային օրվա ընթացքում /մինչև 10.02.2020թ.-ը/ Պատվիրատուին ներկայացնել հաստատված պայմանագիրը, որակավորման ապահովումը և պայմանագրի ապահովումը, ինչը սակայն վերջինիս կողմից չի տրամադրվել:

Վերոգրյալով պայմանավորված՝ Մասնակիցը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ-ն, որպես ընտրված /հաղթող/ մասնակից, հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չներկայացնելով պայմանագիրը, հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.02.2020թ.-ի թիվ 26/26-1/2528-2020 գրությամբ «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2020/55 ծածկագրով ընթացակարգը բավարարել:

2. «Վարազդատ Սահակյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ